


O. Rheege Kueh
Kueh



12 MAR 2011

№ 1 „Ճառապայմանի գրադարան” № 1

ԾԵՐՈՒՆ ՎԻՐԱՄԵԱՆ

=ԵՂՋՈՅԵ=

(Հոգեբանական համիլոյ)

ԱՐԹՈՒՐ

Տառապան «Լոյս» Բէնբուղեան փող. № 12.

1915

891.99
4-68

6105.80.51

№ 1 „Ճառագայթ“-ի գրադարան № 1

891.99-1

Ա-68

Կ

ԾԵՐՈՒԽ ՎԻՐԱԲԵԱՆ

8965

—ԵՂԱՋՈՒ—

(Հոգեբանական էտիւդ)



Տպարան «Լոյս» ԲԷՇՔՈՒԳԻԱՆ փող. № 12.

1915

12.08.2013

57621

ԵՐԻ ԱԹԸԾԻՆ

...—Հողը գլխիդ եղած անմիտ.

Մարդ էլ սարելն կթողնի՝

Ու էն հեռու շոգ արանի՝

Գեղում մարդի կը գնայ.

Ոնց պիտ թողնես էս սարելը

Բարձր, հպարտ, գեղեցիկ

Որ գարնանը ծաղիկներով

գարդարւած

Ուր մենք խմբով՝ աղջիկներով

Գնացել ենք բանջարի,

Ուր մենք այնտեղ ծաղիկներից

Փռւնջ ենք փնջել ու երգել...

Ոնց պիտ թողնես ու մոռանաս

Սիրուն հովը սարելի.

Ոնց պիտ թոցնես ու մոռանաս

Քջջոցը աղբիւրի:

Եւ գարունքւայ էն օրերին,

Երբ արևը ոսկեվառ՝

Արտուները վեր բարձրացած

Երգում են միշտ խմբովին,

Կամ լորերը թփի միջում՝

Կաքաները քարերում՝

Իրենց անուշ երգերովը

Մար ու ձոր են թնդացնում՝

Ո՞նց պիտ թողնես էս ամենը

Ու գնաս, էն արանի

մի խուլ գիւղում

Շոգից տանջւես ու տանջւես

Ոնց սիրեցիր դու էն տղին

Որն արանի օդը ծծած

Դէմքը զունատ, աշքերն պլշած

Կարծես մեռել լինէր հանած:

Ո՞նց խաբնւար, որ ասացին

Հարուստ է նա, մնց խաբնւար

Որ նրանից նշան վերցիր...

II

Տխուր էր Եղոն, և նրա հոգուն

Մի խոր տխրութիւն կրկին համակեց.

Ես չէի ուզում ինձ ստիպեցին.

Ասում է Եղոն իր ընկերուհուն.

Ես չէի ուզում ինձ ստիպեցին,

Բայց հնար չեղավ... և ես որքան ծեծ

հօրիցս եմ կերել մօրս եմ աղաչել.

Բայց Մանէ քուրիկ, որ դու ասում ես

Ես քեզ կլսեմ, թէ զօռով էլ տան

Մի օր էնտեղից կըփախչեմ կզամ:

Ար ես մնց թողնեմ էս հոդն ու ջուրը

Ու արտասուքը Եղոնին խեղդից,

Խօսքերը կիսատ, վայր ընկաւ թախտին.

— Խելքիդ կաց խելքիդ, ասում է Մանէն.

Քեզ շատ բան կասեն, բայց ուր ես լսում,

Ծնողաց լսես, ջուրը կդցեն,

Խօսքիդ պինդ մնա... մէրդ գտլիսէ,

Իսկ ես գնում եմ...

III

— Ելի լաց եղար, ամօթ քեզ, ամօթ...

— Մայրիկ ջան մայրիկ, նորից իմ խնդրում.

Հայրիկին ասա, նշանս յետ տայ,

Եղօն տղեղ է, նրանց չիմ սիրում:

Գիւղը հեռու է շոգ արան տեղ...

Ասաւած ինչ գառն է աղջկայ կեանքը...

Կրկին արցունքի վճիտ կաթիներ,

Մէկ մէկ թափւեցին նրա աչքերից.

— Քար ընկնի գլխիս, ինչեր եմ լսում,

Հասկանում ես դու, ինչեր էս խօսում,

Եղու դու աղջիկ՝ էղպիսի խօսքեր...

Հէրըդ իմանայ՝ հոգիդ կհանի:

Ոնց թէ չես ուզում գնալ դու մարդու,

Ո՞նց թէ Եղօնին երբէք չես սիրում...

Եղօն մի տղայ, հարուստի որդի.

Ի՞նչ անենք, թէ մի քիչ սիրուն չի.

Աղջիկն էլ էղպէս բան կմտածի:

Ի՞նչ անենք՝ գեղը մի քիչ հեռու է.

Եղօն կասեմ տարին մի անգամ

Քեզ բերի մեր տուն:

Ի՞նչ անենք գեղը շոգ արան տեղ է.

Բա ապրողները էնտեղ մարդիկ չեն,

Բա մնց են ապրում:

Ամեն բարելիք էն գեղը լիքն է

Էլ տանձ, էլ խնձոր, էլ գեղձ, էլ խաղող...

Իսկ էստեղ սար տեղ, ինչ է գտնուսւմ

Սաղ տարին կարօտ ամեն բարիքից,

ապրում ենք չմը ցամաք.

Հերիք լաց լինես, աչքերդ սրբիք.

Եւ հիմի շատով քո հէրը կգայ,

Թող նա չտհանի՝ քեզ լաց լինելիս.

Թող քիզ չանիծի, թող քեզ օրհնանքով
ճանապարհ դնի:

Աղջիկը հօր տանն ժամանակ ունի.

Մինչև մեծանայ՝ տասնեօթ տարեկան,

Նրանից յետոյ ով որ էլ ուզի

Նա պիտի զնայ մարդու անպայման...

Դէ, ձէնդ կտրիք, աչքերդ սրբիք.

Թու հէրը հիմի գեղից տռւն կգայ:

IV

Եւ փոքր ինչ յետոյ Եղոսի հէրը

Գեղից տռւն դարձոււ.

Եղոսն զեռ հեռւից հօր ձայնը լսած.

Տեղից վեր կացաւ աչքերը սրբեց:

Բայց հայրը հէնց որ տռւն մտաւ,

Եւ երբ Եղոսի աչքերն կարմրած

Ու արտասւալից դիտեց, նկատեց,

Դէմքը խոժոռեց ու վայրագ ձայնով
աղջկան ասեց:

— Հը, էլի ինչ է, դու լաց ես եղեւ

Ի՞նչ ես աչքերդ կարմրացրել...

հ'ը, ասա տհանեմ.

Կոթի դու ասա, խի՞ է լաց լինում...

— Լալիս է էլի...

Աղջկն առաջուց չեմ ու չում կանի!

— Զէ, ասա տհանեմ:

— Ասում է հեռու շող արան տեղում
ի՞նչ է գտնւում որ զնամ մարդու...

— Ինչեր է ասում, մէկ էլ լսել եմ
իդպիսի խօսքեր, մէկ էլ տեսել եմ,

Որ լաց է լինում,

Ասուած է վկայ որ հաստ քեանդիրը

Վիզը կը գցեմ, խեղդաման կանեմ,

Ոնց թէ հեռու է ոնց թէ արան է.

Աղջկայ բախտը որտեղ էլ բացւի,

նա պիտի զնայ:

Որտեղ որ հաց կայ, որտեղ ապրուստ կայ,
Էնտեղ էլ կեանք կայ:

Փառք աստծոյ, որ մեր խնամիներն էլ

Անքուն ցեցի տէր, ահազին կովեր.

Եղներ, ոչխարներ գոմի մէջ լցրած,

Ցորենը առատ, ապրում են ուրախ,

Դէ ձէնդ կտրիք, ու էլ ձէն ծպւտ

Սրանից յետոյ քեզնից չլսւեն:

ՀՀ ՀՅ

բարձր մասու ընց տառի չ հասն-
- արյած խոր ու համեմ չ գոր-
- ի թոշ չ մի ժամ չ զիջ-
- ալ յանձ չ մի պարագ դաշտ
- առ եամ չ ըստ ու պարագ դաշտ

ԵՐԳ ԵՐԿՐՈՐԴ

1. Անուն մի ընտառ է առաջ թի ու
պահակ. լի բանց պահակ առաջ առ
ուստի պահակ առ
այ պահակ ընտառ լավ զարդ ու բարձ
զարդ պահակ լի բանց
լի մուտքածու պահակ պահակ զարդ
զարդ պահակ ու պահակ
մուտքածու պահակ պահակ զարդ
զարդ պահակ ու պահակ
մուտքածու պահակ պահակ զարդ
զարդ պահակ ու պահակ

गोप

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԳ

—Գնում ենք հանդը շուտ թագարէք տես
կերակուր եփիր ու մեզ ուղարկիր.

Դէ շուտ ժամ արի հէյ գետին մտած.

Նայեցէք սրա արած գործերին:

Հը, չինի թէ եղօի ծեծը

Ես քանի օրը գլխիցդ է պակսել.

ՀԵԿ հա իշխ պէս քեզ պիտի բղեն

կու ուստի ամեն եղանակ

մետ հարս ես ուղուի,

իս ութ ամսաւալ մէջ ես քեզ չտեսայ

Մի խելքը գլխին գործ կատարելիս:

Դու պիտի տասը ձեռնանու նման

Սաղօրը բանես առանց յոզնելու.

Գիտես որ տանը օղլուշաղ չկայ.

Գիտե՞մ ամեն ինչ դու ես ասելու...
Յա ա ա ա ա ա ա ա ա ա ա ա ա ա ա ա ա ա

Ի շուտ ժամ արի, թէ չէ օղօրս
եւանդեմ եռաւ ճշակը ենանդէ:

բա ավելիցը մի պահսկեզնի:

Սա դայըն եղի պէս սադ օրը

ու բան չի անում:

W. H. K. 1900. 15

— զա չլի չկպէս ո, չյ գու ասկդաւ...
— Տո ուղարկա իշխան մատու.

Ըկծ գործուաց Եղան. զլիայ. Մեծի իս սովոր. Եհ էլ բեր լու

կեդն Եղասօ... ուզեց նա լացեր,

Գոռալ, հեկեկալ, բախտից բողոքել,

II

Բայց որ օրէնք էր որ հարսը երթէք
Կեսառի մօտին ձէն չպիտի հանէր,
Որն էլ եղօի ան ու սաբաափից,
Ձէն - ձուն չհանեց և լուռ ու խոնարհ
Իր գործը կրկին նա շարունակեց:
— Քնում ենք հանդը. կերակուր եփիր, Յի կուր
ու մեղ ուղարկի:

III

Եղօն ու հայրը գերանդին վերցած,
Արագ քայլերով դաշտ շտապեցին.
Այնտեղ նրանք պիտ, ցորեն հնձէին,
Գուցէ գիշերն էլ այնտեղ մնային:
Եղօն շուտափոյթ կերակուր եփեց,
Հանդը ուղարկեց, իսկ ինքը մենակ.
Անընկեր մնաց և սենիակ մտաւ,
Թոյլ - թոյլ ոտքերով թաղթին մօտեցաւ
Նստեց այստեղ նա. և զլուխն առած
Զեռների ափին, ցածրաձայն լացեց
Լացեց հեկեկաց...

Եղօն անիծում իրեն հէգ բախտը,
Նզովք մըմնջում իր ծնողներին,
Ատած ամուսնուն, դաժան կեսառին:
Վրէժինդրութեան ոգով նա լցւած,
Աչքերը յառեց նա վարկենապէս.
Ինչէր մտածեց, ինչէր երազեց,
Եւ ինչէր ուղեց անել այդ մարգկանց...
Բայց հիասթափւեց..., երագ են դոքա:
Իր ծնողները հեռու, հեռու տեղ,

Կեսառն, ամուսինն ուժեղ ու դաժան,
Իսկ ինքը մի կին, մի թոյլ արարած...
Բայց Եղօն ընդմիշտ մի ելք էր փնտում
Սուկ երջանկութեան ուղին գտնելու...

Եւ, նրա գլխում մի միտք է ծագում
Թողնել այդ տունը, գնալ հայրենիք.
Իսկ ծնողները թէ չընդունեցին,
Կերթայ քաղաքը մուրացկան կլինի...
Նրա աչքերը փայլատակեցին.
Պահ մի մեկուսի նա հանգստացաւ.
Նա գնալու է դէպի հայրենիք,
Պիտի աղատւի այդ դաժան կեանքից.
Բայց ինչ հնարքով գնալ հայրենիք.
Խորամանկ էր նա՝ կարող էր գտնել:

IV

Ողջ օրը անցաւ. և օրը մթնեց.
Ու զիւղը կամաց լրեց, պապանձւեց.
Շատերը իրենց տունը քաշւեցին,
Շատերը կալը, շատերը հանդը:
Եղօնի կեսառն ու ամուսինը
(Եղօն լսել էր իրանց ծառայից)
Պիտի ողջ գիշերն այստեղ մնային:
Եւ Եղօն կրկին ծառային պաշարով
Հանդը ուղարկեց: Իսկ ինքը դարձեալ
Անընկեր մնաց: Եւ սենեակ մտնելով
Դէս ու դէն ընկաւ
Մեռած սկսրոջ հագուստներն գտաւ:

Եւ նա հագնւած դուրս դուրս եկաւ բակը,
Վերցրեց այնտեղից մի փայտի կտոր.
Ապա բակից էլ գեղը մտնելով,
Նա ճամբայ ընկաւ...

V

Խերը դիշեր էր, և գիւղի ճամբով
Եղան գնում էր, գնում ու գնում.
Գնում էր Եղան արագ քայլերով,
Գնում էր Եղան մենակ անընկեր...
Բայց երբեմն կանգնում նա ճամբի վրայ,
Եւ զարիուրանքով նայում էր չորս դեն.
Վախն էր Եղանին տանջում ու աանջում,
Վախից էր նրա սիրտը տրուիում...

VI

Յանկարծ նա լսեց մարդկային ձայներ,
(Չորս մարդիկ էին ուրիշ գիւղերի)
Եղան սարսափած իսկոյն կանգ սռաւ.
Ո՞վեր են դոքա, և ուր են գնում:
Բայց երկիւղն անցաւ, երբ որ իմացաւ.
Դոքա մարդիկ են ուրիշ գիւղերի:
— Բարե ձեզ աղբէր, էդ ուր էք գնում.
— «Քաղաք ենք գնում մենք աշխատելու.
— «Քաղաք էք գնում, ես էլ եմ գնում
Է՞ս լաւ էլաւ, մենակ էի ես.
— «Մէսակ ես քոյրիկ—ասաց նրանցից մէկն
Բա էս ինչպէս է, էս կէս գիշերին
Դու մի օղլուշաղ ճամբայ, ես գնում
բա չեմ վախնում:

Ճամբէքը լիքն են հազար չարքերով...
— Գնում եմ ախպէր, մեծ դարդի տէր եմ.
Գնում եմ քաղաք, նրանից քիչ հեռու,
Սարերի գլխին մի դեղ կա՝
Էնտեղ եմ գնում:

ԶՈՐՈՐՈՐԻ ԵՐԳ

...— Մայրէկ, ինձ ծեծում, սաղ օրը տանջում,
Մայրիկ, սաղ օրը միշտ բանեցնում,
Ու գիշերները չունէի ես ըռւն,
Եւ չէի առնում ցերեկը հանգիստ:
Էնտեղ բոլորը լղար ու դեղնած
Ցաւից փորն ուրած, աչքերը պլշած
Մայրիկ, ինձ մի տես, ոտից մինչ գլուխ
նոյն օրն եմ ընկել...

— Գլխիդ քար ընկնի. սե ըլէր էն օր
Որ դու ծնւեցիր ու աշխարհ եկար,
Որ մեզ ողջ գիւղում խայտառակ արիր,
Բա էս ութ ամիս դու պսակւել ես.
Էս դուզ ութ ամիս էնտեղ ես եղեւ
Մարդու հետ ապրել, թէ օր թէ գիշեր
Ախչի լսողը բա ինչեր կասի,
Աղչի, աղչի անունդ կտրւի...
Հրէս քու հէրը գեղից տուն կզա
Աղչի դու նրան ինչ ջուղար կտաս
Դէ, գնա կորի, ջուտով ջուրն ընկի

Կամ բարձր սարից քեզ ներքեւ գցի,
Դէ գնա կորի, լաւ է շուտ մեռնես,
Քան թէ աշխարում խայտառակ ապրես...
— Կերթամ ես, մայրիկ, կերթամ կորչիմ...
Ու գիւղացիներն եկել ու կանդնել Եղունց գուան,
Խուլ աղմուկ հանում խօսում քչիչում,
Նրանց խօսելու միակ առարկան Եղուն է դասել.
Նրանք խօսում են թէ ինչպէս Եղուն
Ութ ամսւայ կին, ամուսնուն թողել
Հօր տուն է դարձել:

— Աչքդ լիս ըլի, աղջիկդ եկել է,
իր մարդուն թողել.

Հեգնանքով ասաց մի հատ գիւղացի—
Եղուի հօրը, հանդից տուն գարձող:
Ու, հօր աչքերը փայլատակնցին
Պահ մի շարած նա մնաց կանգնած,
Եւ հեհեալով գաղանի նման՝
իսկոյն տուն մտաւ:

Նախ շէմքում կանգնած, աչքերը յառած,
Չորս կողմը նայեց. տեսաւ Եղուին
Այլանդակ դէմքով, հազուստը փոխած,
Որն, որպէս մէկ անմեղ մեղաւոր,
Տիրուր ու տրտում իր մօր մօտ կանգնած,
Իսկ մայրը որպէս աղջկան դատաւոր
Դէմդիմաց կանգնած հարցաքննում էր.
Եւ միշտ անիծում և միշտ նախատում.
Եղուի հայրը ամեն ինչ հասկացաւ
Եւ ողջ մարմնով սկսեց դողաւ.
Եւ գաղանային ահեղ գոռոցով,
իսկոյն յարձակւեց Եղուի վրայ:

Լաց ու աղաղակ իրար խառնւած
գեղը տարածւեց.
Եղուն լալիս էր, մայրն աղաղակում,
իսկ հայրն կատաղի գոռում, հայհոյում,
Եղուին գցած իր ոտքերի տակ,
Ուժեղ հարւածով խփում ու խփում:
Ու գիւղացիներն աղմուկը լսած,
Բոլորը մտան Եղունց բակը.
Շատերն էլ բակից տան մէջ մտնելով,
Տեսան Եղուին... և նրա հօրը:
Եւ գիւղացիները Եղուի հօրը
Մի կողմ քաշեցին: Բայց ոչ մի խօսք
Ոչ մի համոզում չէր մեղմացնում
Նրա զայրոյթը: «Թողէք ինձ թողէք,
թողէք սպանեմ, որ իմ գդակը
Ողջ գեղի միջին գետնովը տւեց»...
||

Ուշ կէս գիշեր էր՝ գեռ խուլ աղմուկը
Շարունակում էր Եղունց տանը.
Հայրն իր զայրոյթը չմեղմացը ած,
Դեռ նախատում էր իր աղջկանը:
«Հէնց առաւօտը երբ լոյսը բացւի,
իրար հետ կերթանք քո կեսառնց տուն
Դու նրա առաջ պիտի ծունկ չողես,
Ջեւները պաշես, որ մեղքդ ների
իսկ թէ չես գալու, հէնց էս սհաթիս
Դուրս արի տանից, չոլերը կորիր,
աչքիցս հեռացիր:

Եղուն լուռ ու մունջ գուրս եկաւ տանից
Եւ գեղը մտաւ, ճանապարհ ընկաւ,
իսկ նրա մայրը ուզեց հետևել

Բայց հայրն սպառանաց ու լոեցրեց:

Գիւղը դատարկ էր, և փողոցներում
էլ ոչ ոք չկար:

Սիրուն գիշեր էր. կապոյտ երկնքում
Աստղերն ու լուսին փայլում, պլազում
Բարձր լեռներից մեղմիկ զեփիւռը
Փչում ու փչում...

Գնում էր Եղսօն, գնում ու գնում
Գնում էր Եղսօն, յուսահատ, լքւած,
Գնում էր Եղսօն լուռ ու մոլորւած,
Գնում էր Եղսօն.-չզիտէր, թէ մւր...
Գիւղից թիչ հեռու, մի սար կար կանգնած
Բարձր, վիթխարի.

Սիրուն էր այդ սարն, սիզաւէտ, կանաչ:
Եղսօն կանգ առաւ, երկիւղած դէմքով
Չորս կողմը նայեց. ի՞նչ անել այժմ.
Եւ պահ մի շւար, նա մնաց կանգնած...

Եւ յետոյ կարծես մի բան որոշած,
Արագ քայլւածքով սարը բարձրացաւ.
Եւ մի քանի րոպէ դեռ ևս չանցած,
Արդէն կանգնած էր սարի կատարին:
Չորս կողմը նայեց. նայեց հայրենի
Սիրուն սարերին, կանաչ դաշտերին:
Որոնք հարազատ մայրերի նման
Նրան փայփայել են մանուկ հասակից:
Ու Եղսօն նայեց, նայեց շաբունակ...

Արցունքից խեղդւած, սկսեց լացել...

Ու արտասւալից տիրալի ձայնով,

Դառնում է Եղսօն իր հայրենիքին.

«Ողջին հայրենիք...»

Ողջոյն սարերիդ, ողջոյն դաշտերիդ...

Այս, ևս հալածւած, այս ես միշտ գժրախտ

Ոչ մի բոպէ չեմ գտել համգիստ

Ինձ ոչ մի բոպէ բախտը չժպտաց.

Ես հալածւեցի իմ գաժան մարդուց,

Ծնողներիցս, գիւղի ամբոխից,

Որոնք խաւարի մժեղների պէս,

Միշտ մութն են սիրում, և լոյսը՝ ատում.

Որոնք բոլորն էլ ասում են,

Թէ կինը պիտի լինի միշտ ստրուկ.

Եւ ծնողները ում որ տան մարդու,

Նա պիտի գնայ տանց տրտունջի,

Եւ մարդու տանը տանջի, չարչարւի,

Որպէս անզգայ անբան կենդանի:

Բայց ես, հայրենիք. ես անհնազանդ՝

Զուզեցայ գերի լինել այն մարգկանց.

Այժմ ես ազատ, հեռու նրանցից,

Կանգնած եմ այստեղ:

Այժմ ազատ եմ, հոգիս թող խնդա.

Խոցուած սիրոս թող ուժգին թնդայ

Լացող աչքերս ժպտալ ուկենայ,

Այժմ ազատ եմ, էլ ոչ ոք չկայ...

7/11/1922

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ԱՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՁՆ

Բայց էլ չեմ ուզում ապրել այս կեանքում
Խնձ համար դառն է կեանքում ապրելը.
Մենակ եմ ես, ես ոչ ոք չունեմ,
Մենակ չեմ կարող ապրել աշխարհում...
Ա՛խ, ես կուզէի միայն քո գրկում
Հեռու ամենից ապրել միշտ աղատ.
Բայց միայն քեզնով չեմ կարող ապրել
Դու լոկ մի մայր ես որդուդ փայփայող
Հրճանք պատճառող և հոգին շոյող,
Դէ, իս հայրենիք ուզում եմ մեռնել
Ուզում եմ աղատ հանգչել քո գրկում:
Ու այս բարձունքից ներքեւ կնետւեմ,
Թող ես ջախջախւեմ այս անդունդի մէջ...
Դէ մնաս բարով ով իմ հայրենիք
Մեռնեմ սարերիդ, մեռնեմ դաշտերիդ.
Որոնք գարնանը ծաղկունքով փթթած,
Ուրախութիւն են ինձի պատճառել,
Դէ մնաս բարով, բայց միայն զիտցիր,
Այժմ ուրախ եմ որ այսպէս աղատ,
Որ հպարտ մահով գրկումդ եմ հանգչում...

Եւ... սիրան գիշեր... Ապաղեր ու լուսին
Կապոյտ երկնքում փայլում, պլպլում, դժբ լուսում
Բարձր լեռներից մեղմիկ զեփիւոր
Փշում ու փշում...



ՀՀ Ազգային գրադարան



NL0375004

57621